Digitally signed by
AVANESYAN ANAHIT 7011850163
Date: 25.03.2026 12:03:24

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 24-03-2026 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2025 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԶԱՔԻՅԱՆ Փ. ԹԻՎ 7-3
1.3 Պետական գրանցման համարը		222.160.68143
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-02-09
1.5 ՀՎՀՀ-ն		02605266
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10606609
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		advocates.academy
1.8 Էլեկտրոնային փոստը		info@advocates.academy
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ փաստաբանների պալատ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արա Զոհրաբյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	25	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Բանկային տոկոսներ	2,677,315
	Փոխհատուցման գումարներ	507,560
	Ավանդ	30,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսուցում	323,763,765

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	324,254,816	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Տարվա ընթացքում ստացված 323,763,765 ՀՀ դրամ ուսուցման գումարները գոյացել են հավակնորդների քննության վճարներից, ունկնդիրների ուսման վարձերից, ինչպես նաև կազմակերպված վերապատրաստման դասընթացների համար վճարված գումարներից (այդ թիվը չի արտահայտում հարկային իմաստով եկամտի չափը, քանի որ վերջինս գոյանում է ծառայության մատուցման պահին): Տարվա ընթացքում օգտագործված միջոցները կապված են ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից իրականացվող գործունեության հետ և չեն հանդիսանում ծրագրային ծախսեր:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 19 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ "Four A Consulting"CJSC

audit accounting advisory assurance

ՀԱՊՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2025 թվականի ապրիլի 30-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ համապատասխան,, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

16 մարտի 2026թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	27,977	9,838
Ոչ նյութական ակտիվներ	5	4,245	13,735
		32,222	23,573
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		410	-
Դեբիտորական պարտքեր	6	5,505	6,749
Ներդրումներ	7	32,516	32,516
Դրամական միջոցներ	8	42,672	9,977
		81,103	49,242
Ընդամենը ակտիվներ		113,325	72,815
Զուտ ակտիվներ			-
Կուտակված արդյունք		(9,531)	(31,920)
		(9,531)	(31,920)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	9	757	9,849
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	12,201	10,163
		12,958	20,012
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	109,648	84,723
Շահութահարկի գծով պարտավորություն		250	-
		109,898	84,723
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		113,325	72,815

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մարտի 16-ին՝

Արա Զոհրաբյան
Ռեկտոր

Անահիտ Ավանեսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 19-րդ էջերում ներկայացվածկից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	12	261,773	188,290
Ինքնարժեք	13	(123,098)	(100,809)
Համախառն շահույթ		138,675	87,481
Այլ եկամուտ	14	9,601	9,761
Իրացման ծախսեր	15	(13,951)	(14,262)
Վարչական ծախսեր	16	(99,220)	(93,498)
Այլ ծախսեր	17	(13,106)	(8,893)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս		21,999	(19,411)
Ֆինանսական եկամուտ/ծախսեր		2,678	2,679
Շահույթ մինչև հարկերը		24,677	(16,372)
Շահութահարկի գծով ծախս	18	(2,288)	(1,258)
Տարվա շահույթ/(վնաս)		22,389	(17,990)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		22,389	(17,990)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 19-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ նախորդ տարվա հաշվետվությունների	(13,930)	(13,930)
Տարվա արդյունք	(17,990)	(17,990)
2024թ. դեկտեմբերի 31ի դրությամբ	(31,920)	(31,920)
Տարվա արդյունք	22,389	22,389
2025թ. դեկտեմբերի 31ի դրությամբ	(9,531)	(9,531)

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 19-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցներիհոսքեր		
Վաճառքից/ծառայություններից մուտքեր	323,764	233,867
Գործառնական այլ մուտքեր	507	539
Գնումների դիմաց վճարումներ	(45,148)	(39,842)
Վճարումներ աշխատակիցներին	(120,197)	(108,560)
Վճարումներ հարկերի և այլ վճարների գծով	(79,748)	(66,707)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(11,656)	(11,183)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	67,522	8,114
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով վճարումներ	(37,505)	(8,054)
Փոխառությունների տրամադրում/մարում, զուտ		-
Ավանդների գծով ներդրում/մարում, զուտ	-	5,000
Ստացված տոկոս	2,677	3,115
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	34,828	61
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսքեր	32,694	8,175
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	9,977	1,802
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	42,672	9,977

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 19-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի հիմնադիրն է ՀՀ փաստաբանների պալատը: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2012թ. փետրվարի 9-ին, գրանցման համարը՝ 222.160.68143 է, գործունեության նպատակն է.

- կազմակերպել և անցկացնել ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը,
- կազմակերպել ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը.
- կազմակերպել և անցկացնել փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը,
- իրականացնել ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն:

Հիմնադրամը ղեկավար մարմինը բաղկացած է Հոգաբարձուների խորհուրդ՝ Հիմնադրամի կառավարման խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) և Հիմնադրամի Ռեկտորից:
Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից:
Հոգաբարձուների խորհրդի կազմը
Սիմոն Բաբայան *Խորհրդի նախագահ*
Արտյոմ Սուջյան *ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ*
Նիկոլայ Հակոբյան *Խորհրդի անդամ*
Լեոնիկ Հովհաննիսյան *Խորհրդի անդամ*
Լյուդվիկ Դավթյան *Խորհրդի անդամ*
Տիգրան Խուրշուդյան *Խորհրդի անդամ*
Նազելի Սուքիասյան *Խորհրդի անդամ:*
Խորհուրդը կազմավորվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահից և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից նշանակված չորս անդամից և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցչից: Խորհրդի չորս անդամներին նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ երեք տարի ժամկետով: Չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն ՀՀ փաստաբաններ: ՀՀ աարդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից:

Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և չունի մասնաճյուղեր: Հիմնադրամի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Զաքյան փ. 7-3 շենք: Աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է՝ 20 մարդ (2024թ.-ին՝ 21 մարդ):

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:
Ներկայումս ՓՄԿ-ների ՖՀՄՍ չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ների ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման

համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի հաշվառման ընդհանուր սկզբունքների վրա:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է("դրամ"), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվեփակման ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվեփակման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքը.

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.87	3.71
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը,հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա, սարքավորումներ	1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք և այլն	5-8 տարի
Այլ	5-8 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում.

Ուսումնական և համակարգչային ծրագրեր	10 տարի
Համակարգչային լիցենզիաներ	4 տարի:

3.4 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապահանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

I. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.8 Հասույթ

Հասույթի ճանաչում

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հիմնադրամը ավարտվածության աստիճանով որոշված հասույթի նկատմամբ հաշվարկում է հարկային նպատակով դեռևս չառաջացած ԱԱՀ-ն՝ ներկայացնելով այն ֆինանսական հաշվետվետվություններում որպես կրեդիտորական պարտք:

Ուսման վարձերից հասույթի ճանաչում

Հասույթը հիմնականում առաջանում է ուսման վարձերից, որոնց մասով օրացուցային օրերով հաշվարկվում է ավարտվածության աստիճանը և համաձայն վերը նշված պայմանի, ամբողջությամբ ճանաչվում է դեբիտորական պարտք:

Քննության մասնակցության վճարներից և այլ ուսումնական ծառայություններից հասույթի ճանաչում

Քննության մասնակցության վճարներից և այլ ուսումնական ծառայություններից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում դուրս գրված հաշիվ ֆակտուրաների հիման վրա:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ	Շենքերի վրա կապիտալ ծախսեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	3,427	189,210	7,850	31,481	9,683	241,651
Ավելացում	1,418	105	-	3,040	637	5,200
Օտարում	(28,780)	(7,048)	-	(5,040)	(3,940)	(44,808)
Վերադասակարգում	92,982	(92,872)	-	(110)	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	69,047	89,395	7,850	29,371	6,380	202,043
Ավելացում	18,576	-	11,900	3,011	-	33,487
Օտարում	(28,545)	(2,030)	-	(1,049)	-	(31,624)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	59,078	87,365	19,750	31,333	6,380	203,906
Կուտակված մաշվածություն						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	2,953	182,498	7,850	25,048	8,765	227,114
Տարվա ծախս	6,306	479	-	2,192	563	9,540
Օտարում	(28,755)	(7,352)	-	(4,616)	(3,726)	(44,449)
Վերադասակարգում	87,378	(87,498)	-	120	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	67,882	88,127	7,850	22,744	5,602	192,205
Տարվա ծախս	11,648	477	238	2,479	113	14,955
Օտարում	(28,545)	(2,030)	-	(656)	-	(31,231)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,985	86,574	8,088	24,567	5,715	175,929
Հաշվեկշռային արժեք						
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,165	1,268	-	6,627	778	9,838
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,093	791	11,662	6,766	665	27,977

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ: 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 149,532 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները հաշվառվել են զրո հաշվեկշռային արժեքով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 178,760 հազար դրամ՝):

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Ինտերնետային կայք	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	93,022	-	998	94,020
Ավելացում	-	4,000	-	4,000
Օտարում	-	-	(998)	(998)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	93,022	4,000	-	97,022
Ավելացում	-	-	-	
Օտարում	-	-	-	
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	93,022	4,000	-	97,022
Կուտակված մաշվածություն				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	74,022	-	201	74,223
Տարվա ծախս	9,092	112	199	9,403
Օտարում		-	(400)	(400)
Ճշտում	61			61
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	83,175	112	-	83,287
Տարվա ծախս	9,092	400	-	9,492
Օտարում	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	92,265	512	-	92,777
Հաշվեկշռային արժեք				
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,847	3,888	-	13,735
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	757	3,488	-	4,245

6. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,726	5,349
Դեբիտորական պարտքերի պահուստ	(6,078)	(2,015)
Տրված կանխավճարներ	75	134
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	2,124	2,721
Այլ դեբիտորական պարտքեր	658	560
	5,505	6,749

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

7. Ներդրումներ

Հազար դրամ	Ընթացիկ	
	2025թ	2024թ
Ավանդ	32,516	32,516
	32,516	32,516

Հազար դրամ	2025թ	2024թ
Մայր գումար	30,000	30,000
Հաշվեգրված տոկոսներ	2,516	2,516
	32,516	32,516

31.12.2025թ. դրությամբ ավանդները ներդրված են Ինեկոբանկ ՓԲԸ-ում տարեկան 8.9 % տոկոսադրույքով:

8. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդ դրամարկղում	9	9
Մնացորդներ բանկերում	42,663	9,968
	42,672	9,977

9. Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	9,849	18,933
Տարվա ընթացքում ստացված ակտիվներ	-	-
Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված	(9,092)	(9,084)
Տարեվերջի մնացորդ	757	9,849

Հետաձգված եկամուտներն իրենցից ներկայացնում են միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների կողմից ստացված ոչ ընթացիկ ակտիվներ՝ Հիմնադրամի կանոնադրական նպատակներով օգտագործելու համար: Տվյալ շնորհների գծով չկան կցված և չկատարված պայմաններ:

10. Հետաձգված հարկ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	(10,163)	(8,905)
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում	(2,038)	(1,258)
Տարեվերջի մնացորդ	(12,201)	(10,163)

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Անավարտ ծառայություն	1,122	3,458	4,580
Չօգտագործված արձակուրդային պահուստ	1,729	566	2,295
Հարկային վնաս	1,168	(1,168)	-
	4,019	2,856	6,875
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ուսման վարձերի գծով հարկային առումով դեռևս չճանաչված հասույթ	14,182	4,894	19,076
	14,182	4,894	19,076
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(10,163)	(2,038)	(12,201)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Անավարտ ծառայություն	745	377	1,122
Չօգտագործված արձակուրդային պահուստ	858	871	1,729
Հարկային վնաս	2,132	(964)	1,168
	3,735	284	4,019
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ուսման վարձերի գծով հարկային առումով դեռևս չճանաչված հասույթ	12,640	1,542	14,182
	12,640	1,542	14,182
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(8,905)	(1,258)	(10,163)

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	632	796
Ստացված կանխավճարներ	68,064	54,832
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	28,090	19,383
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	9	6
Ընթացիկ պահուստ	12,753	9,606
Այլ կրեդիտորական պարտքեր	100	100
	109,648	84,723

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

12. Հասույթ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսման վարձից եկամուտ	207,377	159,067
Հասույթի ճշգրտում ըստ ավարտվածության աստիճանի	27,190	12,182
Քննության մասնակցության վճար	23,500	15,041
Վերապատրաստման վճար	2,590	1,500
Կրկնակի ուսուցումից եկամուտ	500	500
Այլ եկամուտ	616	-
	261,773	188,290

13. Ինքնարժեք

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքների ինքնարժեք	941	-
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	122,157	100,809
	123,098	100,809

Մատուցված ծառայությունների ինքնարժեք

Աշխատավարձ	97,953	77,614
ՀՄ մաշվածություն	13,049	7,416
Այլ	12,096	15,779

14. Այլ եկամուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ջեռուցման ծախսի փոխհատուցումից եկամուտ	446	470
Ակտիվներին վերաբերող շնորհից եկամուտ	9,092	9,092
Այլ	63	199
	9,601	9,761

15. Իրացման ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների մաշվածություն	9,112	9,092
Մարկետինգի և գովազդի ծախսեր	4,639	5,170
Այլ	200	-
	13,951	14,262

16. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	63,316	65,118
Արձակուրդի պահուստի ծախսեր	3,147	4,839
Մաշվածության և ամորտիզացիայի, սպասարկման ծախսեր	2,514	2,134
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	15,575	8,092
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,220	980
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	4,693	6,182
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	546	254
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	700	580
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	957	591
Այլ ծախսեր	6,552	4,728
	99,220	93,498

17. Այլ ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	4,063	1,850
Անհատույց տրված ակտիվներ	2,520	5,574
Տույժեր	-	305
Բարեգործական ծախսեր	5,600	-
Այլ ծախսեր	923	1,164
	13,106	8,893

18. Շահութահարկի գծով փոխհատուցում /ծախս/

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	250	-
Հետաձգված հարկ	2,038	1,258
	2,288	1,258

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	24,677		(16,372)	
Շահութահարկ՝ 18% (2024թ.՝ 18 %)	4,442	18.00	(2,947)	(18.00)
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(2,154)	(8.73)	4,205	25.68
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	2,288	9.27	1,258	7.68

19. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Հիմնադրամի ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակարության ժամկետները: Հիմնադրամի ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 10-ում 12,201 հազար դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հիմնադրամի ղեկավարությունը հավատացած է, որ Հիմնադրամն ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային

ակտիվները: Եթե Հիմնադրամն ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

20. Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,306	3,894
Ավանդ և փոխառություն	32,516	32,516
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	42,672	9,977
	78,494	46,387

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	13,494	10,508
	13,494	10,508

21. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

21.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ղ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

22. Պայմանական պարտավորություններ

22.1 Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

22.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական դրության վրա:

22.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

23. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնադիրը՝ Փաստաբանների պալատը, հոգաբարձուների խորհուրդը՝ կազմով, հիմնական ղեկավար անձնակազմը: Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ստորև:

Ջեռուցման ծախսի փոխհատուցում

Հազար դրամ	2025թ. ընթացքում ստացված	2024թ. ընթացքում ստացված
ՀՀ փաստաբանների պալատ	446	470
	446	470

23.1 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնադրամի տնօրենը ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	12,812	10,538
	12,812	10,538

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 19.03.2026 16:25